ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը).

Միլենա Հովհաննիսյան, ՀՀ ՖՆ միջազգային համագործակցության վարչության պետ

2. Գործուղման վայրը և ժամկետը.

ք. Վաշինգտոն (Ամերիկայի Միացյալ Նահանգներ), 2025 թվականի Ապրիլի 21-ից մինչև ապրիլի 26-ը

3. Հրավիրող կողմը՝

Համաշխարհային բանկ/ Արժույթի միջազգային հիմնադրամ

4. Գործուղման նպատակը՝

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության պատվիրակության՝ 2025թ. ապրիլի 21-ից 26-ը ներառյալ ք. Վաշինգտոն (Ամերիկայի Միացյալ Նահանգներ) գործուղումը պայմանավորված է եղել Համաշխարհային բանկի (ՀԲ) խմբի և Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) Կառավարիչների խորհուրդների 2025թ. գարնանային հանդիպումներին մասնակցելու անհրաժեշտությամբ:

ԱՄՀ/ՀԲ գարնանային հանդիպումները հնարավորություն են տալիս բարձրաստիճան հարթակում համաշխարհային ֆինանսատնտեսական միջավայրում տեղի ունեցող իրադարձությունների շուրջ քննարկումներ իրականացնել, երկկողմ հանդիպումներ ունենալ միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների, վարկանիշային և այլ կազմակերպությունների պատվիրակների և ներկայացուցիչների հետ, քննարկել նաև համընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցեր, ինչպես նաև մասնակցել գլոբալ մարտահրավերներին առնչվող միջոցառումներին: Կառավարիչների խորհուրդների ամենամյա գարնանային հանդիպումները տարեկան կտրվածքով ամենակարևոր միջոցառումներից են համարվում այդ կառույցների հետ համագործակցության տեսանկյունից,

և դրանց չմասնակցելը տվյալ երկրի և նշյալ կազմակերպությունների միջև հետագա համագործակցության շարունակականության տեսանկյունից կարող են ոչ միանշանակ ընկալվել այդ կառույցների կողմից: Նշված ժամանակահատվածում տեղի են ունեցել ԱՄՀ և ՀԲ, ինչպես նաև այլ միջազգային գործընկեր կառույցների և երկրների համապատասխան ներկայացուցիչների հետ հագեցած օրակարգով երկկողմ հանդիպում-քննարկումներ:

5. Քննարկված թեմաները՝

- Համաշխարհային բանկի հետ իրականացման փուլում գտնվող ծրագրերը,
- Արժույթի միջազգային հիմնադրամի հետ իրականացվող պահուստային ծրագրի արդյունքները և առաջիկա ծրագիրը,
- Նոր հեռանկարային ծրագրերում Միջազգային ֆինանսական կորպորացիայի ներգրավվածության հնարավորությունները, ինչպես նաև ՀՀ առաջանցիկ դիրքը՝ տարածաշրջանում մասնավոր հատվածի ֆինանսավորման ծրագրերի մասով,
- Զարգացման գործընկերների հետ մշակման գործընթացում գտնվող այլ նախագծեր:

6. Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված և քննարկված հարցեր.

Նախարար Հովհաննիսյանի գլխավորած պատվիրակությունը հանդիպել է՝

- ՀԲ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի փոխնախագահ Անտոնելլա Բասսանիին, ՀԲ գործադիր տնօրեն Յուջին Ռուգենաթին, ինչպես նաև Հարավային Կովկասի տարածաշրջանային տնօրեն Ռոլանդ Փրայսին,
- ԱՄՀ կառավարիչ/տնօրենի տեղակալ Բո Լիին, ինչպես նաև ԱՄՀ գործադիր տնօրեն Յիրուն Քլիքին,
- Շվեդիայի արտաքին գործերի պետքարտուղար Դիանա Յանսեին,
- ՕՊԵԿ միջազգային զարգացման հիմնադրամի նախագահ Աբդուլհամիդ Ալխալիֆային,
- ՎԶԵԲ փոխնախագահ Մատեո Պատրոնեին,

- Միջազգային ֆինանսական կորպորացիայի Եվրոպայի, Լատինական Ամերիկայի և Կարիբյան ավազանի հարցերով տարածաշրջանային փոխնախագահ Ալֆոնսո Գարսիա Մորային,

- Սլովենիայի Հանրապետության ֆինանսների նախարար Կլեմեն Բոստյանչիչի, Վրաստանի ֆինանսների նախարար Լաշա Խուցիշվիլիի, Մոլդովայի ֆինանսների նախարար Վիկտորիա Բելուսի և մի շարք այլ պաշտոնյաների հետ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Համաժողովի ընթացքում փաստաթղթերի ստորագրում նախատեսված չէր:

- ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանի և ԱՄՀ գործադիր տնօրեն Յիրուն Քլիքի հանդիպման ընթացքում կողմերն ընդգծել են Ծրագրի տեսանկյունից առաջնային կարևորություն ունեցող 2026թ. բյուջեի դեֆիցիտի մակարդակի նվազեցման անհրաժեշտությունը, որի ուղղությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը նախատեսում է համապատասխան ջանքեր գործադրել առաջիկա բյուջետային գործընթացի շրջանակներում,

- ԱՄՀ գործընկերների հետ բանակցվել է Տնտեսական և ֆինանսական քաղաքականության հուշագրի նախագիծը, համաձայնություններ են ձեռքբերվել խնդրահարույց հարցերի, ինչպես նաև ԱՄՀ հետ առաջիկա ծրագրի հնարավորությունների ու ուղղությունների վերաբերյալ,

- ՀԲ և ՕՊԵԿ հիմնադրամի գործընկերների հետ պայմանավորվածություն է ձեռքբերվել 2025թ. բյուջետային աջակցության վարկերի ստացման նախապայմանների ու ծավալների առնչությամբ,

- Սլովենիայի ֆինանսների նախարարության կողմից պատրաստակամություն է ներկայացվել երկկողմ հուշագրի շրջանակներում աջակցելու ՀՀ ՖՆ աշխատակիցների վերապատրաստմանը և կարողությունների զարգացմանը,

- ՀԲ գործընկերների հետ համաձայնություն է ձեռքբերվել «Նաիրիտ» քիմիական գործարանի տարածքի վերականգնման նպատակով դրամաշնորհի տրամադրման առնչությամբ,

- Հստակեցվել են մի շարք ծրագրային առաջարկների նկատմամբ պահանջները, վերջիններիս կառուցվածքը, իրականացման ժամկետները և ակնկալվող արդյունքները:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

- ԱՄՀ-ի հարկաբյուջետային հարցերի դեպարտամենտի տնօրենի տեղակալ Քեթրին Բայերի հետ հանդիպման ընթացքում ՀՀ ՖՆ պատվիրակությունը գործընկերներին է ներկայացրել առաջիկայում ակնկալվող տեխնիկական աջակցության մանրամասները, ինչպես նաև համագործակցության հնարավոր ուղղությունները:

- ՀՀ վիճակագրական կոմիտեի կարողությունների գնահատման և զարգացման համար Նախար Հովհաննիսյանի կողմից հայցվել է աջակցություն ԱՄՀ թիմից, որին ստացվել է դրական արձագանք (ժամկետների մասին լրացուցիչ կտեղեկացվի):

- Առաջարկություններ են հնչել Վրաստանի և Մոլդովայի ֆինանսների նախարարների կողմից փորձի փոխանակման նպատակով երկկողմ այցելությունների կազմակերպման վերաբերյալ (կողմերը հատկապես մեծ հետաքրքրություն են ցուցաբերել պետական պարտքի կառավարման ոլորտում ՀՀ փորձառության նկատմամբ):

9. Ստորագրություն, ամսաթիվ.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ՄԻԼԵՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

02.05.2025թ.